ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան

12 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Սևակ Միքայելյանը, Անդրանիկ Բաբայանը, Արշավիր Խաչատրյանը, Գոհար Հակոբյանը, Արա Հարությունյանը, Սամսոն Հարությունյանը, Գինեվան Ղազարյանը, Անահիտ Մարտիրոսյանը, Խաչիկ Մուրադյանը, Արտեմ Ստեփանյանը, Մերի Տոնոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գուրգեն Հակոբյան, Արևիկ Եփրեմյան, Զարիկ Վարդանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար ՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 07 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի N 07 նիստի օրակարգը.
1) Հողամասի փոխանակություն կատարելու մասին
2) Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին
3) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
4) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին
5) Գարունիկ Մայիսի Ռուբենյանին, Հայկ Կորյունի և Լիլի Կորյունի Հարություններին

պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
6) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 10-ի N 53 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
7) «Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկի, Հրազդանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող հաստատությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 252-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
9) Մեկ անձից գնում կատարելու մասին
10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի NN 219 և 229 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին
11) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 30-րդ կետով, հիմք ընդունելով Գևորգ Հունանյանի 2023 թվականի ապրիլի 28-ի դիմումը.

1.Թույլատրել Հրազդան քաղաքի Հրազդան-Զովաբեր-Դդմաշեն խճուղի 3/12 հասցեում գտնվող Գևորգ Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 19102022-07-0097, գաղտնաբառ՝ QKNB8S8LPEUX) 140.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը փոխանակել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 04052023-07-0238, գաղտնաբառ՝ K63PFXVYA5QZ) Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 1/13 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 140.0քմ մակերեսով համարժեք հողամասի հետ, քանի որ վերը նշված հողամասը գտնվում է էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտում, ըստ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ <<ԳԵՂԱՄԱ>> մասնաճյուղի կողմից տրված տեղեկանքի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97/

Լսեցին
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածով.

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 1-ին փողոց 23/3 հասցեում գտնվող 4.3քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-0063-0053-0022-ից) հողամասը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1.Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Ժիրայր Տեր-Մկրտչյանի 2023 թվականի մայիսի 4-ի դիմումը.

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 104 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Ժիրայր Տեր-Մկրտչյանին ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց թիվ 1/2 հասցեում գտնվող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08112022-07-0141, գաղտնաբառ՝ WX1XQWDAYENF/ 35.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին կից Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28042023-07-0231, գաղտնաբառ՝ ZGXA3JVU7ECI) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 1/5 հասցեում գտնվող 5.9քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ 26 300 (քսանվեց հազար երեք հարյուր) դրամ կադաստրային արժեքով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100/

Լսեցին

ԳԱՐՈՒՆԻԿ ՄԱՅԻՍԻ ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ, ՀԱՅԿ ԿՈՐՅՈՒՆԻ ԵՎ ԼԻԼԻ ԿՈՐՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայկ Հարությունյանի 2023 թվականի ապրիլի 13-ի դիմումը.

1.Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 3-րդ փողոց թիվ 394 հասցեում գտնվող, Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոց 16 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Գարունիկ Մայիսի Ռուբենյանին, Միկրոշրջան թաղամասի 107 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչներ Հայկ Կորյունի և Լիլի Կորյունի Հարությունյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30012015-07-0017, գաղտնաբառ՝ LUESZTNTE1ZX/ պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 45.88քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 132 550 (մեկ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր հիսուն) դրամ կադաստրային արժեքով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 10-ի «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումար հատկացնելու մասին» N 53 որոշման 1-ին կետում նշված 80 000 000 (ութսուն միլիոն) թիվը փոխարինել «145 000 000» (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն) թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102/

Լսեցին
«ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1. Հաստատել «Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկի, Հրազդանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող հաստատությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 252-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 252-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ն/

Լսեցին
ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին հավելվածի 71-րդ կետով.

1.Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասում տեղադրված ավտոտնակների և կրպակների ապամոնտաժման և տեղափոխման աշխատանքները կազմակերպելու նպատակով տրանսպորտային /տեխնիկական միջոցների/ ծառայության ձեռք բերումը

իրականացնել մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի NN 219 ԵՎ 229 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 219 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 229 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հրազդան համայնքի Սոլակ բնակավայրի 6-րդ թաղ./49 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ

իրավունքների պետական գրանցման վկայական՝ N03122014-07-0049, տրված՝ 03 դեկտեմբերի 2014 թվականին) 477,14 քառակուսի մետր մակերեսով նախադպրոցական ուսումնական հաստատության շենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հրազդան համայնքի Սոլակի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 25 (քսանհինգ) տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107/

Ավագանու անդամներ՝

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄՈՆԹԵ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ՝ _____

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը _____

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի մայիսի 12-ի N 99 որոշման

ՑԱՆԿ
Աճուրդային կարգով օտարման ենթակա հողամասերի

h/h	Հողամասի Հասցեն	Կադաստրային Ծածկագիրը	Մակերեսը (քմ)	Մեկ նարկային գինը ՀՀ դրամ	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը
1	Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14-րդ փողոց 36/2	07-001-0512-0064	550.0	1 600 000	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման
2	Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 1/15	07-001-0109-0040	225.0	1 300 000	Արդյունաբերության, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նշանակության	Արդյունաբերական օբյեկտների
3	Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 35/3	07-001-0516-0040	89.9	600 000	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման
4	Ք. Հրազդան, Գործարանային փողոց 40/1	07-001-0159-0021	1847.5	5 500 000	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման
5	Ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս 43/9	07-001-0454-0137	20.0	500 000	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման
6	Ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս 54/35	07-001-0452-0261	70. 0	500 000	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի մայիսի 12-ի
N 103 որոշման

ԿԱՐԳ

«ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ

1.Սույն կարգով սահմանվում է «Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկի, Հրազդանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող հաստատությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի (այսուհետ՝ լրիվ մաշված գույք) դուրսգրման կարգը:

2.Սույն կարգի իմաստով գույքը լրիվ մաշված է համարվում, եթե.

1)այն հետագա շահագործման համար ոչ պիտանի է դարձել լրիվ ֆիզիկական մաշվածության, վթարների, տարերային աղետների, շահագործման նորմալ պայմանների խախտման հետևանքով և այլ նմանատիպ պատճառներով

2)այն պիտանի չէ հիմնարկի, կազմակերպության ընդլայնման, վերակառուցման և տեխնիկական վերազինման նպատակով օգտագործելու համար,

3)դրա հետագա օգտագործումը, իրացումը կամ այլ օտարումը անհնար է կամ տնտեսապես աննպատակահարմար:

3.Սույն կարգի 2-րդ կետի համաձայն լրիվ մաշված գույքը լուծարման ենթակա է, եթե այն.

1)իր մեջ պարունակում է այնպիսի նյութեր, դետալներ, առանձին մասեր, որոնք անհրաժեշտ են կազմակերպությանը հետագա գործունեության համար,

2)պարունակում է գունավոր և թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր:

4.Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված լրիվ մաշված գույքի լուծարումից առաջացած թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հանձնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5.Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ձևակերպելու նպատակով համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում համայնքի ղեկավարի կարգադրությամբ, իսկ կազմակերպության դեպքում՝ կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, ընդ որում՝

1)հիմնարկի լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման համար ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ լրիվ մաշված գույքի համար պատասխանատվություն կրող անձինք, համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչները, ինչպես նաև անկախ

գնահատողը (տնտեսապես շահավետ լինելու դեպքում) կամ, անհրաժեշտության դեպքում, անկախ գնահատողների խումբը:

2)կազմակերպությունների լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկվում է նաև կազմակերպության համակարգումն իրականացնող ստորաբաժանման մեկ մասնագետ:

6.Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար, անհրաժեշտության դեպքում, կազմակերպության ղեկավարը, պայմանագրային հիմունքներով կարող է ընդգրկել համապատասխան մասնագետների:

7.Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման համար ստեղծվող հանձնաժողովը.

1)անցկացնում է լուծարման կամ դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքի զննում և օգտագործելով անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման տվյալները, կազմում եզրակացություն՝ հիմնավորելով նրա հետագա գործածության համար ոչ պիտանելիությունը կամ հետագա վերականգնման աննպատակահարմարությունը՝ նշելով լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման հիմքերը (մաշվածություն, վերակառուցում, շահագործման նորմալ պայմանների խախտում, վթար և այլն),

2)հիմնավորում է լուծարման կամ դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքի օգտակար ծառայության սպառված լինելու փաստը,

3)միջոցներ է ձեռնարկում լրիվ մաշված գույքի ժամկետից շուտ շահագործումից դուրս գալու համար մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ, ներկայացնում առաջարկություններ հիմնարկի, կազմակերպության ղեկավարությանը՝ մեղավոր անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

4)որոշում է լուծարված լրիվ մաշված գույքի առանձին հանգույցների, դետալների, նյութերի հետագա օգտագործման հնարավորությունը և կատարում դրանց օրենսդրությամբ սահմանված գնահատումը,

5)իրականացնում է հիմնարկի, կազմակերպության ղեկավարի կողմից ստեղծվող աշխատանքային խմբի վերահսկողությունը լուծարման ենթակա լրիվ մաշված գույքից պիտանի հանգույցները, դետալները, գունավոր և թանկարժեք մետաղներն առանձնացնելու նկատմամբ, որոշում է դրանց քանակը, կշիռը և վերահսկում դրանց հետագա պահեստավորումը,

6)կազմում է լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման ակտ:

8.Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման ակտում նշվում են նաև լրիվ մաշված գույքը բնութագրող հետևյալ տարրերը.

1)գույքի արտադրման կամ կառուցման ամսաթիվը,

2)հիմնարկի և կազմակերպության կողմից գույքի ձեռքբերման ամսաթիվը, այն շահագործման հանձնելու ամսաթիվը,

3)գույքի սկզբնական արժեքը (վերականգնված արժեքը, վերագնահատման ամսաթիվը, արժեքը),

4)հաշվապահական հաշվառման նպատակով հաշվարկված մաշվածության գումարը (վերականգնված արժեքը, վերագնահատման ամսաթիվը, արժեքը),

5)գույքի լուծարման կամ դուրսգրման հիմքերը (մաշվածություն, վերակառուցում, շահագործման նորմալ պայմանների խախտում, վթար և այլն),

6)գույքի հիմնական մասերի, դետալների, հանգույցների, կառուցվածքային տարրերի վիճակը:

9.Ավտոտրանսպորտային միջոցների լուծարման կամ դուրսգրման ժամանակ, բացի սույն կետում նշված տարրերից, նշվում է նաև ավտոմեքենայի վազքը, անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական այլ տվյալներ:

10.Վթարի կամ այլ պատահարի հետևանքով հիմնարկի, կազմակերպության հաշվեկշռից լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման դեպքում ակտին կցվում է վթարի կամ այլ պատահարի մասին կազմված արձանագրության օրինակը, վնասի փոխհատուցման կամ վերականգնման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը:

11.Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման մասին հանձնաժողովի ակտը ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից և հաստատվում հիմնարկի, կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

12.Մինչև լուծարման կամ դուրսգրման ակտի հաստատումը դուրս գրվող լրիվ մաշված գույքի քանդում և ապատեղակայում չի թույլատրվում:

13.Քանդված և ապատեղակայված լրիվ մաշված գույքի այն հանգույցները, նյութերը, դետալները և առանձին մասերը, որոնք պիտանի են հետագա օգտագործման համար, գնահատվում և մուտքագրվում են այն հաշիվներին, որոնցում հաշվառվում են համանման նյութական արժեքները, իսկ ոչ պիտանի դետալները և նյութերը հաշվառվում են որպես ջարդոն:

14.Հիմնարկի, կազմակերպության ամրացված լուծարված կամ դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի վերաբերյալ, որոնք պիտանի են հետագա օգտագործման համար, կազմվում է եզրակացություն և ուղարկվում է Հրազդանի համայնքապետարան, որը կազմակերպում է համապատասխան գույքի, նրա առանձին հանգույցների, նյութերի դետալների և մասերի աճուրդ և ստացված միջոցներն ուղղում համայնքի բյուջե:

15.Լուծարված կամ դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի ոչնչացումը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի:

16.Հրազդան համայնքի ավագանին լրիվ մաշված գույքի առանձին տեսակների համար կարող է սահմանել լրիվ մաշված գույքի դուրսգրման այլ կարգ, հաշվի առնելով հիմնարկի, կազմակերպության կողմից ներկայացված առաջարկությունները և հիմնավորումները:

Հավելված
Հրազդան համայնքի
ավագանու 2023 թվականի
մայիսի 12-ի N 104-Ն որոշման
Հավելված
Հրազդան համայնքի
ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 9-ի N 252-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		3441722.8	2278794.7	1307928.1
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160), այդ թվում՝	7100	480682.0	480682.0	x
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112), այդ թվում՝	7131	18150.0	18150.0	x
1111	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ		9900.0	9900.0	x
1111Ա	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		7000.0	7000.0	x
1111Բ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ		500.0	500.0	x
1111Գ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈԼԱԿ/		700.0	700.0	x
1111Դ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		800.0	800.0	x
1111Ե	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		600.0	600.0	x
1111Զ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԶՐԱՌԱՏ/		300.0	300.0	x
1112	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		8250.0	8250.0	x
1112Ա	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		7000.0	7000.0	x
1112Բ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ		500.0	500.0	x

1112Գ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		300.0	300.0	x
1112Դ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		0.0	0.0	x
1112Ե	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		200.0	200.0	x
1112Զ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		0.0	0.0	x
1112Է	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌԱՏ/		50.0	50.0	x
1112Ը	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈԼԱԿ/		200.0	200.0	x
1113	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ		122320.0	122320.0	x
1113Ա	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ		45000.0	45000.0	x
1113Բ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ		47000.0	47000.0	x
1113Գ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌԱՏ/		350.0	350.0	x
1113Դ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈԼԱԿ/		12250.0	12250.0	x
1113Ե	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈԼԱԿ/		115.0	115.0	x
1113Զ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		10400.0	10400.0	x
1113Է	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		25.0	25.0	x
1113Ը	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		7000.0	7000.0	x
1113Թ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		180.0	180.0	x
1113Ժ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1113Ի	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌԱՏ/		0.0	0.0	x

1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	277150.0	277150.0	x
1121Ա	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից)		231500.0	231500.0	x
1121Բ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից)		4800.0	4800.0	x
1121Գ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /Ջրառատ/		600.0	600.0	x
1121Դ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /ՍՈԼԱԿ/		11000.0	11000.0	x
1121Ե	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /ՔԱՂՍԻ/		14000.0	14000.0	x
1121Զ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /ԼԵՌՆԱՆԻՍ/		15000.0	15000.0	x
1121Է	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ԼԵՌՆԱՆԻՍ		100.0	100.0	x
1121Ը	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ՋՐԱՌԱՏ		50.0	50.0	x
1121Թ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ՍՈԼԱԿ		50.0	50.0	x
1121Ժ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ՔԱՂՍԻ		50.0	50.0	x
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	46062.0	46062.0	x
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144 + տող 1145), այդ թվում՝	71452	46062.0	46062.0	x
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից՝		0.0	0.0	x
1133	աա) Հիմնական շինությունների համար		3500.0	3500.0	x
1133Ա	-մինչև 300 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Բ	1133) տողում չնախատեսված օբյեկտների համար, որից		0.0	0.0	x
1133Գ	- 201-ից մինչև 500 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Դ	501-ից մինչև 1000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Ե	1001-ից մինչև 3000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող		0.0	0.0	x

	օբյեկտների համար՝				
1133Զ	3001-ից և ավելի քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Է	աա) Հիմնական շինությունների համար /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1133Ը	աա) Հիմնական շինությունների համար /ՔԱՂՍԻ/		0.0	0.0	x
1133Թ	աա) Հիմնական շինությունների համար /ՋՐԱՌԱՏ/		0.0	0.0	x
1133Ժ	աա) Հիմնական շինությունների համար /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		0.0	0.0	x
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0	0.0	x
1134Ա	-մինչև 20 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1134Բ	- 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		585.0	585.0	x
1135Ա	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1135Բ	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		0.0	0.0	x
1135Գ	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ՋՐԱՌԱՏ/		0.0	0.0	x
1135Դ	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության		0.0	0.0	x

	թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ԼԵՌՆԱՆԻՍՏ/				
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		160.0	160.0	x
1136Ա	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1136Բ	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		0.0	0.0	x
1136Գ	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ՋՐԱՌԱՏ/		0.0	0.0	x
1136Դ	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		0.0	0.0	x
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և/կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		16062.0	16062.0	x
1137Ա	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		7000.0	7000.0	x
1137Բ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		6000.0	6000.0	x
1137Գ	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՋՐԱՌԱՏ/		56.0	56.0	x
1137Դ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՋՐԱՌԱՏ/		56.0	56.0	x
1137Ե	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՍՈԼԱԿ/		660.0	660.0	x

1137Զ	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՔԱՂՍԻ/		600.0	600.0	x
1137Է	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		500.0	500.0	x
1137Ը	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		290.0	290.0	x
1137Թ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՍՈԼԱԿ/		500.0	500.0	x
1137Ժ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՔԱՂՍԻ/		400.0	400.0	x
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		0.0	0.0	x
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		4400.0	4400.0	x
1139-	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏՆՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՀԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ		1300.0	1300.0	x
1139Ա	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		1000.0	1000.0	x
1139Բ	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1139Գ	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏՆՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՀԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ /ՍՈԼԱԿ/		120.0	120.0	x
1139Դ	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏՆՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՀԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ /ՔԱՂՍԻ/		60.0	60.0	x

1139Ե	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏՆՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՀԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		60.0	60.0	x
1140	Է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		910.0	910.0	x
1140Ա	- առևտրային օբյեկտների համար		0.0	0.0	x
1140Բ	-հանրային սնունդի և զվարճանքի օբյեկտների համար		0.0	0.0	x
1140Գ	- բաղնիքների (սաունաների) համար		0.0	0.0	x
1140Դ	- խաղատների կազմակերպման համար		0.0	0.0	x
1140Ե	- շահումով խաղերի կազմակերպման համար		0.0	0.0	x
1140Զ	- վիճակախաղերի կազմակերպման համար		0.0	0.0	x
1140Է	Է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		450.0	450.0	x
1140Ը	ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ		15.0	15.0	x
1140Թ	Է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար /ՍՈԼԱԿ/		100.0	100.0	x
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		0.0	0.0	x
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		11960.0	11960.0	x
1142Ա	- ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար		0.0	0.0	x
1142Բ	- Թունդ ալկոհոլ./սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար		0.0	0.0	x
1142Գ	- այլ արտաքին գովազդի համար		11960.0	11960.0	x
1142Դ	- դատարկ գովազդային վահանակների համար		0.0	0.0	x
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		0.0	0.0	x
1144	ի) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		80.0	80.0	x

1145	լ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		550.0	550.0	x
1146	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		2770.0	2770.0	x
1146Ա	- հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		0.0	0.0	x
1146Բ	- ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		0.0	0.0	x
1146Գ	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար /ՍՈԼԱԿ/		300.0	300.0	x
1146Ե	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		130.0	130.0	x
1147	- համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		800.0	800.0	x
1148	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉ.ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂ.ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԾԻՍԱԿԱՏ.ԾԱՌԱՅ.ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ	455200	500.0	500.0	x
1148Ա	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉ.ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂ.ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԾԻՍԱԿԱՏ.ԾԱՌԱՅ.ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ /ՔԱՂՍԻ/	455200	0.0	0.0	x
1149	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ		250.0	250.0	x
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	7146	17000.0	17000.0	x
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1152 + տող 1153), այդ թվում՝		17000.0	17000.0	x
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		6000.0	6000.0	x
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		11000.0	11000.0	x
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165), այդ թվում՝	7161	0.0	0.0	x
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1162 + տող 1163 + տող 1164), որից՝		0.0	0.0	x
1162	ա) Եկամտահարկ		0.0	0.0	x
1163	բ) Շահութահարկ		0.0	0.0	x

1164	գ) Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0.0	0.0	x
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0	0.0	x
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝	7300	2476120.7	1313192.6	1162928.1
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7311	0.0	0.0	x
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	0.0	x
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7312	0.0	x	0.0
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	x	0.0
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7321	0.0	0.0	x
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	0.0	x
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7322	0.0	x	0.0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	x	0.0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝	7331	1313192.6	1313192.6	x
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		1192180.0	1192180.0	x
1251Ա	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ /ՋՐԱՌԱՏ/		0.0	0.0	x
1251Բ	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1251Գ	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ /ԼԵՌՆԱՆԻՍ/		0.0	0.0	x

1251Դ	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ /ՔԱՂՍԻ/		0.0	0.0	x
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1255 + տող 1256), այդ թվում՝		84450.8	84450.8	x
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		0.0	0.0	x
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0	0.0	x
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		36561.8	36561.8	x
1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝		0.0	0.0	x
1259	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից		0.0	0.0	x
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1261 + տող 1262), այդ թվում՝	7332	1162928.1	x	1162928.1
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		1162928.1	x	1162928.1
1261Ա	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) /ՍՈԼԱԿ/		0.0	x	0.0
1261Բ	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) /ԼԵՌՆԱՆԻՍ/		0.0	x	0.0
1261Գ	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) /Ջրառատ/		0.0	x	0.0
1262	բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝		0.0	x	0.0
1263	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից		0.0	x	0.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	7400	484920.1	484920.1	145000.0
1310	3.1 Տոկոսներ, այդ թվում՝	7411	0.0	x	0.0
1311	Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ		0.0	x	0.0

1320	3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝	7412	0.0	0.0	x
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		0.0	0.0	x
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝	7415	45052.6	45052.6	x
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /Հրազդան/		15000.0	15000.0	x
1331Ա	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /Լեռնանիստ/		0.0	0.0	x
1331Բ	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /Քաղսի/		100.0	100.0	x
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		3700.0	3700.0	x
1332Ա	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /ՋՐԱՌԱՏ/		3.6	3.6	x
1332Բ	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /ՍՈԼԱԿ/		2000.0	2000.0	x
1332Գ	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /ՔԱՂՍԻ/		1500.0	1500.0	x
1332Դ	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ /ԼԵՌՆԱՆԻՍՏ/		1200.0	1200.0	x
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		3416.0	3416.0	x
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		18133.0	18133.0	x
1334Ա	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր /ՍՈԼԱԿ/		0.0	0.0	x
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, (տող 1341 + տող 1342 + տող 1343), այդ թվում՝	7421	122817.5	122817.5	x
1340Ա	ա)ՔԿԱԳ համար		0.0	0.0	x
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր		0.0	0.0	x
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		0.0	0.0	x

1342Ա	ա)ՔԿԱԳ համար		3998.0	3998.0	x
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ		0.0	0.0	x
1343Ա	Թիվ 2 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		1012.0	1012.0	x
1343Բ	Թիվ 4 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		5258.0	5258.0	x
1343Գ	Թիվ 5 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4730.0	4730.0	x
1343Դ	Թիվ 6 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4576.0	4576.0	x
1343Ե	Թիվ 7 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4554.0	4554.0	x
1343Զ	Թիվ 8 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		5280.0	5280.0	x
1343Է	Թիվ 9 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4950.0	4950.0	x
1343Ը	Թիվ 11 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		6820.0	6820.0	x
1343Թ	Թիվ 12 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		13068.0	13068.0	x
1343Ժ	Թիվ 13 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		10164.0	10164.0	x
1343Ի	Թիվ 15 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		6270.0	6270.0	x
1343Լ	Թիվ 16 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		7524.0	7524.0	x
1343Խ	Արամ Խաչատրյանի անվան N1 երաժշտական դպրոցի ծնողական միջոցներ		5098.5	5098.5	x
1343Ծ	Առնո Բաբաջանյանի անվան N2 երաժշտական դպրոցի ծնողական միջոցներ		6682.5	6682.5	x
1343Կ	ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		2803.5	2803.5	x
1343Հ	ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		3789.0	3789.0	x
1343Ձ	ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔ		12240.0	12240.0	x
1343Ղ	ՎԱՀԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՄՄՈՒԿ		2450.0	2450.0	x
1343Ճ	ՍՈԼԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ/ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ/		3740.0	3740.0	x
1343Մ	ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ/ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ/		3850.0	3850.0	x
1343Յ	ՔԱՂՍԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ/ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ/		3960.0	3960.0	x
1343Ն	ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԻ ՊԵՐՃ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՈՒՆ /ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ/		0.0	0.0	x
1344	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		0.0	0.0	x
1344Բ	բ)Անասնաբույժական ծառայության համար		0.0	0.0	x
1350	3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝	7422	162050.0	162050.0	x

1351	Տեղական վճարներ		162050.0	162050.0	x
1351Ա	-տեղական վճարներ հողհատկացման չափագրման համար		0.0	0.0	x
1351Բ	-տեղական վճարներ աճորդի մասնակցելու համար		3450.0	3450.0	x
1351Գ	- տեղական վճարներ շինարարության ավարտը փաստագրելու համար		4000.0	4000.0	x
1351Դ	մինչև 200 քմ.ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համա		0.0	0.0	x
15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպա-նության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություն-ներին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձեւերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեւավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ուղղություններին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձեւավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչեւ 30-ը: Ազատ

տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. ՆՈՒՀ-ն իր գործունեության տեսակով մսուր- մանկապարտեզ է՝ 0-6 տարեկան երեխաների ընդգրկմամբ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքն ու դաստիարակությունը:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի եւ օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարա-հիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման եւ սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական եւ սպասարկող անձնակազմերը հիմ-նադրի միջոցների հաշվին տարին 1 և 2 անգամ անցնում են պարբերական բժշկական զննության: Տարին 2 անգամ պարբերական բժշկական զննություն անցնում են այն աշխատողները, որոնք անմիջականորեն առնչվում են սննդի հետ:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պար-տավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրու-թյանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործու-նեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կա-ռուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակա-վորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆառրակավորման բնութագրե-րին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապե-տության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիա-զորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.
2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.
3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.
5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.
6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատար-ման կամ ոչ պատշաճ կատարման համար.
2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբա-ժանումների իրավասությունները.
5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.
7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյու-նավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմին-ներ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևա-վորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավար-ժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների

մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործու-նեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահման-ներում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխա-տանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատես-ված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնա-դաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավա-րումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատա-րումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.
5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.
6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություն-ների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:
53. Դաստիարակը՝
1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.
2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.
3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝
1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:
55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարո-ղական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆ ԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:
58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատու-թյունը:
60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

65.Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

66. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

67. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման-ված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

68. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

69. Մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

70. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

71. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվություն-ների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏ ԱՏ ՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

72. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված2
Հրազդան համայնքի ավագանու
2023 թ-ի մայիսի 12 -ի
N 106 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թ-ի դեկտեմբերի 09 -ի
N 229 որոշման

Կազմվել է ----------

Բաղկացած է ----- թերթից

Տպագրված է ընդամենը ---- օրինակ

Օրինակ

« Հաստատված է»

ՀՀ Կոտայքի մարզի

Հրազդան համայնքի ավագանու

2023 թվականի մայիսի 12 -ի

N 106 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

---------- Ս. Միքայելյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ

ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ

23.04.2009թ.

Գրանցման համար N85.215.687180

ՀՎՀՀ՝ 03007788

28.12.2022թ. գրանցված կանոնադրության թիվ

--------փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Գործակալության կողմից«---------» ---------20—թ.

աշխատակից՝ ----------

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 15 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:
«Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 15 նախադպրոցական հիմնարկի» (գրանցման համարը՝33.0084) վերակազմավորման արդյունքում ստեղծված ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 15 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համարը՝33.210.01933) իրավահաջորդը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին»,«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ք. Հրազդան Կենտրոն Ա/2:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ« Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ:

2) հայերեն կրճատ՝ «Հրազդանի թիվ 15 ՆՈՒՀ» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Город Раздан N 15 дошкольное учебное заведение» обшественая некоммерческая организация .

4) ռուսերեն կրճատ՝ «Разданский N 15 ДУЗ»ОНКО.

5) անգլերեն լրիվ՝ «Kindergarten No 15 Hrazdan community of Kotayk district RA pre-school educational institution».

6) անգլերեն կրճատ՝ «Kindergarten No 15 in Hrazdan» PsEI:

6. Հաստատությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեւաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8.Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների եւ կազմակերպությունների հետ:

11.Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպա-նության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություն-ներին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձեւերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.
4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.
5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.
2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.
3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.
4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.
5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեւավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձեւից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող

պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. ՆՈՒՀ-ն իր գործունեության տեսակով մսուր - մանկապարտեզ է՝ 0-6տարեկան երեխաների ընդգրկմամբ , որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքն ու դաստիարակությունը:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի եւ օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարա-հիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման եւ սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական եւ սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին տարին 1 և 2 անգամ անցնում են պարբերական բժշկական զննության: Տարին 2 անգամ պարբերական բժշկական զննություն անցնում են այն աշխատողները, որոնք անմիջականորեն առնչվում են սննդի հետ:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը,

բուժաշխատողը:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆառորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիա-զորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատար-ման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները,

հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.
7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմին-ներ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևա-վորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավար-ժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործու-նեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝
1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահման-ներում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար

ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.
9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.
12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատես-ված այլ լիազորություններ.
13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնա-դաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝
1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավա-րումը.
2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատա-րումը.
3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.
5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.
6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություն-ների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝
1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.
2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.
3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝
1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարո-ղական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատու-թյունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

65.Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

66. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

67. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման-ված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

68. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության

ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

69. Մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

70. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

71. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվություն-ների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հան-րապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏ ԱՏ ՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

72. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: